ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13՝՝, հեռ.՝ (011) 90 00 02

№ 18-02.2-2023
«09» 11 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը՝ (այսուհետ Պատվիրատուի ղեկավար) ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի՝ սույն թվականի հոկտեմբերի 31-ի գնահատման նիստի արձանագությունը «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին (այսուհետ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից 09.10.2023 թվականին հայտարարված ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/26 ծածկագրով հուշանվերների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԴՈՆԵՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ. ներկայացված թիվ 1 հավելվածը (դիմում-հայտարարություն) հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև չեն ներկայացվել հրավերով պահանջվող՝ 1.1 (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը) և 1.3 (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի) հավելվածները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 24.10.2023 թվականին Մասնակցին ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն Մասնակցի կողմից սահմանված ժամկետում

գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով՝ Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 01.11.2023թ. հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԴՈՆԵՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գնումների բաժնի պետի վրա:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանը հաջորդող օրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԵՐԱՍԻՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ գնումների բաժնի պետ
Սոնա Ղազարյան, հեռ. 011 90 00 49